# Ուդ



Հայաստանում տարածված ու սիրված ժողովրդական նվագարանների շարքում իր ուրույն տեղն ունի **ուդը**:

Նվագարանն արևելյան ծագում ունի, սակայն ժողովուրդներից շատերն են ուդն ընդունել ու տեղայնացրել: Դրանցից յուրաքանչյուրի կենցաղում այդ նվագարանը հնչում է յուրովի՝ ելնելով ազգային երաժշտության բնույթից, կրելով զուտ տեղային կատարողականության ցայտուն կնիքը:

Լարային կսմիթավոր նվագարան է: Հայտնի է 9-րդ դարից:

Լայնորեն տարածվել է Մերձավոր Արևելքի երկրներում, Կովկասում, Միջին Ասիայում և Հայաստանում:

Հայկական ուդը վեց լար ունի:

Ձայնն արտաբերվում է փետրաձև կնտնտոցի օգնությամբ: